ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» դեկտեմբերի 2011թ. **N----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Սեբաստիա փողոցի հ.18 շենքի հ.18՝ 150.6քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 08.11.2011թ. հ.2711887 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Աշոտ Հակոբյանին և Լյուդմիլա Սիմոնյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ժողովրդական դեպուտատների Շահումյանի շրջանի գործադիր կոմիտեի 25.09.1990թ. հ.62/21-ընդ-77 գրությամբ Սեբաստիա փողոցի հ.18 շենքի հ.18 կիսանկուղային տարածքը, որպես խորդանոց, ժամանակավորապես օգտագործման համար հատկացվել է Սեբաստիա փողոցի հ.18 շենքի հ.43 բնակարանի բնակիչ Սերգեյ Հակոբյանին։

Ս. Հակոբյանի տղան՝ Աշոտ Հակոբյանը, և հարսը՝ Լյուդմիլա Սիմոնյանը, բնակվում են Սեբաստիա փողոցի հ.18 շենքի հ.18 հասցեում (հիմք՝ ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.256190 տեղեկանքը)։

Ս.Հակոբյանը ներկայացրել է հայտարարություն՝ տալով համաձայնություն 25.09.1990թ. հ.62/21-ընդ-77 գրությամբ հատկացված խորդանոցը մասնավորեցնել Աշոտ Հակոբյանի և Լյուդմիլա Սիմոնյանի անվամբ։

Երևան քաղաքի ժողովրդական դեպուտատների Շահումյանի շրջանի գործադիր կոմիտեի 25.09.1990թ. հ.62/21-ընդ-77 գրությունը բավարար չէ հարցը Երևան քաղաքի ավագանու 23.12.2009թ. հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետի շրջանակում կարգավորելու համար։

Աշոտ Հակոբյանի և իր կնոջ՝ Լյուդմիլա Սիմոնյանի անվամբ մասնավորեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ընդունել Երևան քաղաքի ավագանու որոշում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը կարող է մասնավորեցվել Երևան քաղաքի ավագանու թույլտվությամբ։

Ելնելով վերոգրյալից՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշման նախագիծ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ